Երևանի զարգացման 2019-2023թթ. և 2024-2028թթ.

հնգամյա ծրագրերի համեմատական վերլուծություն

Երևանի զարգացման 2019-2023թթ. և 2024-2028թթ. հնգամյա ծրագրերի համեմատական վերլուծություն

Սույն հետազոտությունում դիտարկվել են Երևանի զարգացման 2019-2023թթ. և 2024-2028 թթ. ծրագրերը: Համեմատական վերլուծության են ենթարկվել զարգացման նշված երկու ծրագրերում առկա կրկնվող, շարունակվող և միմյանց հակասող ծրագրային դրույթները՝ քաղաքի արդյունավետ կառավարման տեսանկյունից հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը նպաստելու նպատակով:

Երևանի զարգացման 2029-2023 թթ. և 2024-2028թթ. հնգամյա ծրագրերի համեմատությամբ առանձնացված են հիմնականում ծրագրային այնպիսի դրույթներ, որոնց իրականացումը նախատեսված է եղել նախորդ հնգամյակում, սակայն դրանք ներառված են նաև քաղաքի՝ առաջիկա հինգ տարիների զարգացման ծրագրում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սույն հետազոտության մեջ ներառված են նաև այնպիսի դրույթներ, որոնք ենթադրում են շարունակական իրականացում, և դրանց առկայությունը երկու ծրագրերում պայմանավորված է նաև այդ հանգամանքով:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Առևտրի և սպասարկման ոլորտում Երևանի զարգացման համար առաջիկա տարիներին նախատեսվում են ծրագրեր, որոնք հիմնականում կրկնում են նախորդ հնգամյակն ընդգրկող ծրագրի դրույթները:

Այսպիսով՝ ապօրինի **առևտրի խնդիրը** տեղ է գտել երկու ծրագրերում էլ: Ըստ հնգամյա նոր ծրագրի՝ նախատեսվում են առավել մեծ ռեսուրսների տրամադրում՝ ուղղված ապօրինի առևտրի դեմ պայքարին, ինչպես նաև քաղաքացիների շրջանում իրազեկման լայն աշխատանքներ: Նմանատիպ դրույթ ներառված է նաև նախորդ հնգամյա ծրագրում՝ հետևյալ ձևակերպմամբ. «Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում եւ արգելում, արդյունավետությունը բարձրացնելու նպատակով

օրենսդրական փոփոխությունների կատարում»:

Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մասին կետը ևս տեղ է գտել երկու ծրագրերում էլ: 2024-2028 թթ. զարգացման հնգամյա ծրագրում նշվում է, որ թույլտվությունների հայցման և տրման թվայնացման գործընթացները շարունակվելու են:

Երևան քաղաքում **կենդանիների շուկաների** կառուցման մասին դրույթը կրկնվում է թե՛ 2019-2023թթ., թե՛ 2024-2028թթ. հնգամյա ծրագրերում:

Առևտրի և սպասարկման ոլորտում շարունակվող ծրագրերի մեջ ներառված է նաև **շաբաթ-կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկաների, տոնվաճառների կազմակերպումը:**

Չգործող, լքյալ, հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը լրացած ոչ հարիր տեսք ունեցող **կրպակների ապամոնտաժման** ուղղությամբ միջոցների ձեռնարկման մասին ծրագրային դրույթը ընդգրկված է և՛ 2024-2028թթ., և՛ նախորդ հնգամյա ծրագրում: 2019-2023թթ. ծրագրում այն ներառված է հետևյալ ձևակերպմամ. «Երեւան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների եւ ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման եւ ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության եւ օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն եւ ապամոնտաժում»:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտում միմյանց նման դրույթներ ևս առկա են: Սակայն, օրինակ՝ **առողջապահական օբյեկտների հիմնանորոգման** դրույթը զարգացման 2024-2028թթ. հնգամյա ծրագրում ունի կատարողականը գնահատելու հնարավորություն տվող ավելի հստակ

ցուցիչներ, քանի որ ձևակերպված է հետևյալ կերպ. «Մինչև 2025 թ. հիմնանորոգման և շահագործման են հանձնվելու ևս 7 պոլիկլինիկա»:

Զարգացման 2024-2028թթ. հնգամյա ծրագրում նշվում է, որ կշարունակվեն զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրում առկա **բուժհաստատությունների տեխնիկական հագեցման**, դրանց՝ ժամանակակից պահանջների համապատասխանող բժշկական սարքավորումներով, պարագաներով և գույքով վերազինման գործընթացները, ինչպես 2019-2023թթ., այնպես էլ հաջորդ հինգ տարիների ընթացքում կիրականացվեն առողջ ապրելակերպի քարոզչության, սքրինինգային կամ այլ բժշկական ծրագրեր:

Նախորդ հնգամյա ծրագրում ներառված՝ «բնակչությանը կոմպյուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայության» տրամադրման դրույթը նոր հնգամյա ծրագրում ներկայացված է պակաս հստակությամբ: Այստեղ նշվում է «բնակչության դժվարամատչելի հետազոտությունների և ծառայությունների տրամադրման մասին»:

Բուժհաստատություններում **մասնագետների վերապատրաստման** դրույթը ևս ներառված է երկու ծրագրերում էլ:

Որպես ոլորտային նոր դրույթներ՝ զարգացման 2024-2028 թթ. ծրագրում առանձնանում են հետևյալները.

- Շտապօգնության ծառայության արդիականացում, կանչերի թվայնացում, ավտոպարկի համալրում
- «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի՝ ժամանակակից ստանդարտներին համապատասխանող խոշոր բժշկական կենտրոնի վերածումը:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանության ոլորտում շարունակվող ծրագրերի շարքում է ընդհանուր օգտագործման **կանաչ տարածքների բարելավման** մասին կետը, որը նոր հնգամյա ծրագրում ներառված է ավելի չափելի ցուցիչով՝ մասնավորապես նշելով, որ ավելացվելու են կանաչ տարածքները՝

հասնելով և անցնելով մեկ անձին ընկնող կանաչ տարածքների նվազագույն 9 քմ մակերեսը:

Երևան քաղաքի **անտառպաշտպանիչ տարածքների հիմնման** մասին դրույթը 2024-2028 թթ. զարգացման հնգամյա ծրագրում հանդիպում է հետևյալ ձևակերպմամբ. «Մայրաքաղաքում և մայրաքաղաքը գոտևորող հարակից տարածքներում կստեղծվի բուֆերային անտառապաշտպանիչ գոտի»:

2019-2023թթ. զարգացման հնգամյա ծրագրում ներառված «Կանաչ տարածքների խնամքի եւ ծառատնկման համար **ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում**» դրույթն առկա է նաև նոր հնգամյա ծրագրում: Այս դեպքում նշվում է կոնկրետ ավտոտրանսպորտային պարկի թարմացման մասին:

Ուղղաձիգ կանաչապատման մոտեցման կիրառման մասին դրույթը ևս ընդգրկված է թե՛ նոր, թե՛ նախորդ հնգամյա ծրագրում:

Նախորդ հնգամյա ծրագրում ներառված՝ Երեւան քաղաքի ընդհանուր օգտագործման **կանաչ տարածքների եւ ոռոգման համակարգերի գույքագրման** մասին դրույթը նոր հնգամյա ծրագրում ընդգրկված է որպես շարունակվող նախագիծ, հաջորդ փուլում՝ առաջիկա հինգ տարիների ընթացքում, «վերականգնվելու և արդիականացվելու է ոռոգման համակարգերի կեսից ավելին՝ շուրջ 120 կմ նոր ցանցի անցկացմամբ»:

Փարոսի անտառտնկարկի վերականգնումը ևս երկու հնգամյա ծրագրերում առկա նշանակալից դրույթներից մեկն է:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջության ոլորտում առկա համընկնող ծրագրերից ակնառու է Երևան քաղաքի **բրենդի մշակման** նախագիծը: Նոր հնգամյա ծրագրում այս կետը ևս ներառված է՝ ավելացմամբ, որ ստեղծվելու է քաղաքի բրենդավորման մշակումը գնահատող խորհուրդ:

«Երևան քաղաքում **էքսկուրսիոն ուղղության զարգացման**» կետը

նոր հնգամյա ծրագրում ավելի հստակ ու չափելի ձևակերպումներ ունի: Մասնավորապես նշվում է, որ կգործարկվեն երկու տարբեր երթուղիներ, որոնք կապահովեն զբոսաշրջիկների՝ Երևանի զբոսաշրջային վայրերի շուրջ 80%-ին ծանոթացումը, ինչպես նաև կստեղծվի միասնական զբոսաշրջային քարտ, որը հնարավորություն կտա զբոսաշրջիկներին զգալի զեղչերով այցելել տարբեր թանգարաններ, զբոսաշրջային, ժամանցային վայրեր ու օգտվել քաղաքի տրանսպորտից:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կոմունալ տնտեսության ոլորտում նախորդ հնգամյա ծրագրում ընդգրկված «ԵՄ-ն Երեւանի համար. Արևային համայնք» ծրագիրը» նոր հնգամյա ծրագրում ներկայացված է հետևյալ կերպ. «Կառուցվելու են **արևային կայաններ**, որոնք հնարավորություն կտան օգտագործել արևային էներգիան քաղաքի լուսասվորության համար:

Համաձայն զարգացման 2024-2028 թթ. ծրագրի՝ շարունակվելու են բազմաբնակարան շենքերի **հարթ և թեք տանիքների վերանորոգման** ու շենքերի մուտքերի վերանորոգման ծրագրերը:

Զարգացման 2019-2023 թթ. ծրագրում ներառված **Նուբարաշենի նոր աղբավայրի** կառուցման մասին դրույթը, թեև նույնությամբ չի կրկնվում նոր հնգամյա ծրագրում, սակայն վերջինում ևս նշվում է, որ կառուցվելու է եվրոպական չափանիշներին համապատասխան կենցաղային թափոնների քաղաքային նոր աղբավայր:

Համաձայն նոր ծրագրի՝ շարունակական է լինելու նաև **սանիտարական մաքրում** և աղբահանություն, աղբահանության և սանիտարական մաքրման բարձր որակի ապահովման մասին դրույթը:

«Երևան քաղաքի **վերելակների փոխարինում**» ծրագիրը ևս ընդգրկված է նոր հնգամյա ծրագրում չափելիության ավելի բարձր հնարավորության ապահովմամբ: Նոր հնգամյա ծրագրում մասնավորապես նշված է, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում կփոխարինվեն վթարային վիճակում գտնվող մնացած բոլոր վերելակները:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտում ևս առկա են կրկնվող որոշ դրույթներ: Այսպիսով՝ **մանկապարտեզների գույքի թարմացման** դրույթը առկա է երկու ծրագրերում էլ: Նոր հնգամյա ծրագրում ներկայացված են նաև ծրագրի որոշ մանրամասներ՝ կոշտ գույք, կենցաղային տեխնիկա: Կբարեկարգվեն նաև հիմնանորոգված մանկապարտեզների բակային տարածքները՝ կահավորելով խաղահրապարակները:

Մանկապարտեզների նորոգման ծրագրային դրույթը ևս ներկայացված է նոր հնգամյա ծրագրում, սակայն այս անգամ՝ հստակ չափորոշիչների սահմանմամբ՝ 68 մանկապարտեզ: Ավելին, նշվում է նաև, որ 2026թ. որևէ մանկապարտեզ այլևս հիմնանորոգման կարիք չի ունենա:

Երևանի քաղաքապետարանի դպրոցներում **ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ մրցունակ կրթության ապահովման** աջակցության ծրագրերը ևս շարունակական են լինելու առաջիկա հինգ տարիներին:

Կշարունակվեն նաև **դպրոցների հիմնանորոգման և վերակառուցման**՝ կառավարության համապատասխան որոշումներով իրականացվող ծրագրերը: Համաձայն հնգամյա նոր ծրագրի՝ լրացուցիչ ֆինանսավորման շրջանակում կձեռնարկվեն շենքերի պահպանման և վթարավերականգնողական աշխատանքներ:

Ինչպես զարգացման 2019-2023թթ.-ի, այնպես էլ 2024-2028թթ. ծրագրում ներառված է դրույթ «**սովորողների արժեքային համակարգի ձեւավորման** աջակցության» վերաբերյալ: Առաջիկա հինգ տարիների համար այս դրույթը ձևակերպված է որոշակի հստակ քայլերի սահմանմամբ. ռազմամարզական, հայրենաճանաչողական ուղղվածությամբ ճամբարներ և արշավներ, աշակերտական խորհուրդների ակտիվության, սովորողների՝ հասարակության արդի հիմնախնդիրների շուրջ քննարկումներին նախաձեռնողականության և ներգրավվման խրախուսում:

Զարգացման 2019-2023թթ հնգամյա ծրագրում առկա «Երևանի քաղաքապետարանի դպրոցներում **համընդհանուր ներառականության** համակարգի ներդրում» դրույթը 2024-2028թթ.

հնգամյա ծրագրում և սունի համարժեք: Այստեղ խոսքը կրկին մատչելիության ապահովման մասին է՝ հետևյալ ձևակերպմամբ. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում կբարելավվի կրթական միջավայրը՝ ներդրված և գործարկվող համընդհանուր ներառական կրթության շրջանակում՝ բոլոր երեխաների համար ապահովելով հավասար հնարավորություններ և կրթության մատչելիություն»:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության ոլորտում ծրագրերը հիմնականում շարունակական են:

Մայրաքաղաքի **գործընկերային հարաբերությունների ընդլայնումը** նոր հնգամյա ծրագրում ներառված է ավելի մանրամասն մեկնաբանմամբ՝ հստակ քայլերով, որոնք նպաստելու են գործընկերության զարգացմանը. մի շարք քաղաքների հետ համաձայնագրերի կնքում, առկա համաձայնագրերի շրջանակում կապերի ակտիվացում:

«Միջազգային համագործակցությունների շրջանակներում **համատեղ ծրագրերի մշակում և միջոցառումների իրականացում**» դրույթը առկա է նաև զարգացմանն 2024-2028թթ. հնգամյա ծրագրում:

«Համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների **աշխատակիցների կարողությունների բարձրացում**» դրույթը հետևյալ ձևակերպմամբ առկա է նաև նոր հնգամյա ծրագրում. «Քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների համար համագործակցության շրջանակում կկազմակերպվեն վերապատրաստումներ և կտրամադրվի փորձագիտական աջակցություն»:

ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ, ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթի ոլորտում իրականացվելիք նախագծերում համընկնումներ առկա չեն:

Մինչդեռ օրինակ՝ սպորտի ոլորտում իրականացվող նախագծերը զարգացման 2024-2028 թթ. հնգամյա ծրագրում ներկայացված են չափելիության ավելի բարձր մակարդակով:

Զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրում նշված «**Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերում**» դրույթը նոր հնգամյա ծրագրում ձևակերպված է հետևյալ կերպ. «Կշարունակվի մարզադպրոցների ժամանակակից սպորտային սարքավորումներով ապահովումը»:

«**Սպորտային միջոցառումների** կազմակերպում» դրույթը ևս մասնավորեցվում է նոր հնգամյա ծրագրում, նշվում են միջոցառումների անվանումները. «Երևան Օփեն», «Երևան-մարաթոն»:

«**Արտադպրոցական դաստիարակություն**» նախագիծը նոր հնգամյա ծրագրում ձևակերպված է հետևյալ կերպ. «Արտադպրոցական դաստիարակության միջոցով կշարունակվի երիտասարդ սերնդի շրջանակում առողջ ապրելակերպի խթանումը»:

Հետաքրքրական է, որ երիտասարդությանն առնչվող առանձին դրույթներ նոր հնգամյա ծրագրում առկա չեն. դրանք հիմնականում ներառված են սպորտին առնչվող նախագծերում:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Բարեկարգման նախագծերի շրջանակում զարգացման 2019-2023 և 2024-2028թթ. հնգամյա ծրագրերում համընկնում են հետևյալ կետերը.

- **Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում** և պահպանում: Զարգացման 2024-2028 թթ. հնգամյա ծրագրում մասնավորեցվում է,

որ կիրականացվեն տարեկան 50 կմ միջին նորոգման աշխատանքներ՝ այդպիսով նորոգելով Երևանի ամբողջ 271 կմ ճանապարհացանցը:

Մայթերի վերանորոգում և բարեկարգում (սալիկապատում և եզրաքարերի վերանորոգում): Նոր հնգամյա ծրագրում նշվում է, որ կկառուցվեն և կհիմնանորոգվեն Երևանի բոլոր բակերն իրենց ենթակառուցվածքներով:

Քաղաքակաշինության ոլորտում ևս առկա են կրկնվող և շարունակվող նախագծեր:

Ծովակալ Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային միացնող ավտոմայրուղու կառուցման նախագիծն առկա է նաև նոր հնգամյա ծրագրում:

Զարգացման 2019-2023 թթ. հնգամյա ծրագրում ներկայացված՝ **Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի կառուցման** (Բաբաջանյան-Աշտարակ և Արգավանդ- Ծիրակ ճանապարհահատվածներ) վերաբերյալ հնգամյա նոր ծրագրում նշվում է՝ կիրականացվի Երևանի արևմտյան օղակաձև կապի՝ Բաբաջանյան-Աշտարակի խճուղու ճանապարհահատվածի և ավարտին կհասցվի Ա. Բաբաջանյան փողոցի 1 կմ ճանապարհի շինարարությունը:

Երևան քաղաքի **Կասկադ համալիրի տարածքում** թանգարանի և հարակից հատվածի կառուցապատման ներդրումային ծրագրի դրույթը նոր հնգամյա ծրագրում ևս առկա է: Մասնավորապես նշվում է՝ Երևանի Կասկադ համալիրում չկառուցապատված վերնամասում՝ ավելի քան 8 հա տարածքում, ավարտին են հասցվելու Կասկադ համալիրի կառուցման աշխատանքները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևան համայնքի **բնակիչների կենսամակարդակի բարելավմանն** ուղղված նպատակային ծրագրերի մասին դրույթը ներառված է նաև նոր հնգամյա ծրագրում հետևյալ ձևակերպմամբ. «Շարունակվելու են իրականացվել կյանքի որակի բարելավմանն ուղղված սոցիալական

ծրագրեր խոցելի խմբերի համար»:

Համագործակցության շրջանակներում **սոցիալական գործընկերության և ձեռներեցության ծրագրերը** ևս շարունակվելու են այս հնգամյակի ընթացքում: Սրա վերաբերյալ նոր հնգամյա ծրագրում նշված է՝ կշարունակվի բնակչության զբաղվածության խթանումը՝ սոցիալական գործընկերության և ձեռներեցության համատեքստում մասնագիտական ուսուցման և համապատասխան գործիքների տրամադրման միջոցով:

Նախորդ հնգամյա ծրագրում ներառված **սոցիալական ծառայությունների տրամադրման** և պատվիրակման մասին դրույթը նոր հնգամյա ծրագրում ընդգրկում է որոշ մանրամասներ. նոր սոցիալական ծառայությունների հիմնում, շարունակական վերապատրաստումներ համայնքի համապատասխան աշխատակիցների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար:

Երկու ծրագրերում էլ նշվում է բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին, ինչպես նաև արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց ու ընտանիքներին **տրամադրվող աջակցության** մասին:

Համընկնում են նաև **խնամատար ինստիտուտի** կայացման և խրախուսման (նախորդ հնգամյա ծրագիր) ու շարունակական զարգացման (նոր հնգամյա ծրագիր) մասին դրույթները:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Տրանսպորտի ոլորտում առանցքային՝ Երևանի **հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի** ներդրման դրույթը առկա է երկու հնգամյա ծրագրերում:

Նախորդ հնգամյա ծրագրում ներառված «**հասարակական տրանսպորտի կանգառների կահավորման**» դրույթը նոր հնգամյա ծրագրում ևս ներկայացված է՝ հավելմամբ, որ կանգառասրահները

փոխարինվելու են նոր, «խելացի» լուծումներով վերազինված կանգառասրահներով, անհրաժեշտության դեպքում վերանայվելու է դրանց տեղադիրքն ու իրականացվելու է համալրում:

Նախորդ հնգամյա ծրագրում նշված մ**ետրոպոլիտենի անխափան եւ անվտանգ աշխատանքի ապահովմանն ուղղված** միջոցառումների իրականացման ու վագոնների արդիականացման նախագծերը նոր հնգամյա ծրագրում ունեն հստակ չափելիության ցուցիչներ. նախատեսվում է իրականացվել 16 վագոն՝ 5 գլխամասային, 11 միջանկյալ: Այս համատեքստում կիրականացվեն նաև.

- դեպոյի և արտադրամասի վերանորոգման աշխատանքներ,
- ազդանշանայի և հեռահաղորդակցության համակարգի արդիականացման աշխատանքներ, այդ թվում՝ թվային վերահսկման սարքով հագեցած ազդանշանային բլոկավորման համակարգի փոխարինում,
- կարգավարական և թունելային կապի համակարգերի արդիականացման աշխատանքներ,
- 6 կվ և 825 Վ մալուխների փոխարինման աշխատանքներ,
- մետրոպոլիտենի բաց հատվածի լուսավորության հիմնանորոգման աշխատանքներ,
- ռելեների պաշտպանության համակարգի արդիականացման աշխատանքներ,
- համակցված քաշային ենթակայանների վերանորոգման և արդիականացման աշխատանքներ,
- գերավազքով աշխատող 14 շարժասանդուղքների վերանորոգման կամ փոխարինման աշխատանքներ,
- թունելային հակահրդեհային և ջրամատակարարման խողովակաշարերի նորոգման, ուղեգծերի սպասարկման և նորոգման աշխատանքներ:

Վերգետնյա էլեկտրատրանսպորտի սպասարկման համար նոր ենթակայանների կառուցման նախագիծը ևս առկա է երկու ծրագրերում՝ տարբերությամբ, որ նոր հնգամյա ծրագրով նախատեսվում է հստակ՝ 4 վերգետնյա էլեկտրատրանսպորտի հավաքակայանի կառուցում:

Աջափնյակում մետրոպոլիտենի նոր կայարանի առաջարկն ու «Սասունցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ Սուրմալու տոնավաճառի հարևանությամբ **նոր կայարանի էսքիզային առաջարկի դրույթները նոր հնգամյա ծրագրում ներառված են** որպես նախագծեր, որոնք պետք է ավարտին հասցվեն առաջիկա հինգ տարիների ընթացքում:

ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ

Այս ոլորտում կրկնվող դրույթներ առկա չեն, նոր հնգամյա ծրագրում նշվում է Երևան քաղաքի թվային փոխակերպման հնգամյա ռազմավարության մշակման մասին, ինչն էլ նախատեսում է զարգացում հինգ ուղղություններով.

- թվային ենթակառուցվածքների զարգացում,
- կանաչ քաղաք,
- անվտանգ քաղաք,
- շարժունակության զարգացում,
- «խելացի» կառավարում:

Հատկանշական է, որ Երևանի զարգացման նոր՝ 2024-2028 թթ. ծրագիրն առանձնանում է որոշ ոլորտներում առկա ավելի հստակ ձևակերպված, չափելի վերջնարդյունքներ ենթադրող դրույթներով: Կրկնվող և շարունակվող դրույթները հիմնականում ներառում են կոնկրետ ցուցիչներ, որոնք տալիս են կատարողականի գնահատման հնարավորություն: Նոր հնգամյա ծրագրում առանձնացված էին նաև երկու նոր բաժիններ («Մարդակենտրոն քաղաք», «Զարգացման պոտենցիալ ունեցող քաղաք»), որոնք առնչվում էին Երևանի առավել բաց և թափանցիկ կառավարմանն ու քաղաքի զարգացմանը:

Սույն հետազոտությունն իրականացվել է «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության կողմից «Yerevan G.U.I.D.E. (Generating Understanding in Democrat-ic Elections)» ծրագրի շրջանակում՝ Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ:

Հետազոտություն մեջ առկա դրույթները կարող են չհամընկնել «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության կամ Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների հետ: